Ջատագովության համառոտագիր

ՀԸԳՀ (CEPA) շրջանակներում ՀՀ համաչափ զարգացմանն առնչվող՝ ՀՀ կառավարության պարտավորությունների շուրջ

2024 թ. դեկտեմբեր-2025 ապրիլ մայիս ընթացքում Եվրոպական միության եւ Հայաստանի Հանրապետության միջեւ կնքված Համապարփակ եւ ընդլայնված գործընկերության համաձայնագրի (CEPA), դրա հավելվածների, ճանապարհային քարտեզի եւ գործողությունների ծրագրի այն հանձնառությունների եւ գործողությունների եւ դրանց կատարման մոնիտորինգ է իրականացվել, որով նպատակ է եղել պարզելու, թե որքանով է ՀՀ կառավարությունը իրականացրել Հայաստանի տարածքային համաչափ զարգացման պարտավորությունները: ՀՀ հանձնառությունները սահմանված են ՀԸԳՀ հավելվածներում (Առաջին-132, 133, 134, երկրորդ-79, 80, 81): Մոնիտորինգի արդյունքում, ուսումնասիրելով ՀՀ օրենսդրությունը, ՀԸԳ համաձայնագիրը, հանձնառությունները, կատարողական ցուցանիշները, եզրակացություններ են արվել այն մասին, որ Հայաստանի համաչափ զարգացման հարցում Համաձայնագրում ստանձնված պարտավորությունների պատշաճ չեն կատարված: Դրա պատճառներից մեկը այդ հանձնառություններն ապահովելու գործողությունների անհամարժեք կամ թերի ձեւակերպվածությունն է, կամ էլ դրանց կատարման հարցում անվաբարար ջանքերը եւ հետեւողականության պակասը:

Մոնիտորինգի հիման վրա կազմվել են առաջարկություններ՝ ուղղված ՀՀ կառավարությանը, վարչապետին, Ազգային ժողովին եւ ոլորտային նախարարություններին: Առաջարկություններից մեկը վերաբերվում է համաձայնագրով ստանձնված հանձնառությունների կատարման համար գործողությունների վերանայումը, դրանց համարժեք սահմանումը, դրանց կատարողականությունն ապահովելու համար, ժամկետային, ռեսուրսային եւ ծավալային ցուցիչներով ապահովումը: Առաջարկվում է նաեւ վեց ամսում իրականացնել օրենսդրական եւ ենթաօրենսդրական ակտերի ընդունում, որոնցով կապահովվեն ՀՀ վարչապետի 2023թ. նոյեմբերի 7-ի № 1111-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետությունում լիազորությունների ապակենտրոնացման հայեցակարգը, գործարկումը: Առաջարկվում է նաեւ արմատապես վերանայել համայնքների ֆինանսավորման առկա համակարգերը, այն հաշվով, որ համայնքների, բնակավայրերի, տարածքների զարգացման, ենթակառուցվածքային ապահովման եւ ծառայությունների հասանելիության համար համայնքները ունենան անհրաժեշտ եւ բավարար միջոցներ, ինչի համատեքստում անխուսափելի պետք է լինի նաեւ պետական լիազորությունների վերաբաշխումները տեղական ինքնակառավարման մարմիններին:

Հայաստանի անհամաչափ զարգացման խնդիրը առաջացել է տասնամյակների ընթացքում, պետության զավթման մակարդակի կոռուպցիայի պատճառով, նաեւ այն պատճառով, որ

իշխանությունները այդ խնդիրը որպես երկրի կենսունակության մարտահրավեր չեն դիտարկել, անտեսել են ժողովրդագրական ճգնաժամը, տարածքներում ենթակառուցվածքների համար արվող ներդրումների կարեւորությունը:

Համաձայնագրի ոլորտային մոնիտորինգը իրականացրել, զեկույցը եւ առաջարկությունները մշակել է Ժուռնալիստների Ասպարեզ ակումբի խորհրդի նախագահ, տեղական ինքնակառավարման հարցերով մասնագետ Լեւոն Բարսեղյանը:

Կոնտակտային տվյալներ | +37491821363 | levon@asparez.am | Հայաստան, Գյումրի, Մաղոյան փ., 130/1:

Սույն հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Դրա բովանդակության պատասխանատվությունը կրում է բացառապես հեղինակը՝ Լևոն Բարսեղյանը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները: